

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶԿԻ
ՂԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԻՋՈՑ

Լեզուն նման է հասարակ սերմից ծլած մի ծաղկի, որն օրըստօրե աճելով՝ ավելի ու ավելի գեղեցկանում, հասնում է կատարելության զագաթնակետին, այնուհետև, ասես ծերանալով, սկսում է խոնարհվել, և մենք, անտեղյակ նրա զարգացման ընթացքից, տեսնում ենք նրա վախճանը միայն:

(Arthur Schopenhauer)

Օտար լեզուներ ուսումնասիրելը ուղղակի և անուղղակի կերպով նպաստում է անհատի մտածողության ձևավորմանը: Օտար լեզուներ ուսումնասիրելիս ուսանողի մտքում ծնունդ են առնում նոր երևույթները բնորոշող նոր հասկացություններ, հին գաղափարները ձեռք են բերում նոր նշանակություններ, ուսանողը սկսում է հասկանալ լեզուների միջև առկա նրբությունները, նմանություններն ու տարբերությունները:

Այլ կերպ ասած, օտար լեզու սովորել նշանակում է բացհայտել նոր գաղափարներ, միջառարկայական նոր կապեր, ծանոթանալ տվյալ լեզվով խոսող հանրության պատմությանը, մշակույթին, սովորույթներին և կենցաղին:

Օտար լեզվի ուսումնասիրության ընթացքում ուսանողների նվաճումները անմիջական արտացոլում են այն մեթոդների, որոնք կիրառվել են լեզվի դասավանդման ընթացքում:

Օտար լեզվի դասավանդմանը նվիրված ժամանակակից մեթոդաբանությունը հատուկ տեղ է հատկացնում հաղորդակցման ընթացքում լեզվական նյութի (բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն) ավտոմատացված յուրացմանը, որը ենթադրում է նաև աշակերտի խոսքամտածողական գործունեության զարգացում:

Խոսքային գործունեության զարգացման հաջողությունը ապահովող հիմնական գործոն են վարժությունները: Գոյություն ունեն տարբեր վարժություններ, որոնցից յուրաքանչյուրը յուրովի է նպաստում խոսքային գործունեության ձևավորմանը: Վարժությունների դասակարգման հիմքում ընկած են տարբեր գործոններ.

ա) ըստ նպատակի՝ ռեցեպտիվ- ռեպրոդուկտիվ

բ) ըստ կարողությունների ու հմտությունների ձևավորման հաջողության՝ լեզվական- խոսքային

գ) ըստ կատարման ձևի՝ բանավոր-գրավոր, թարգմանական-ոչ թարգմանական, ծրագրավորված-ոչ ծրագրավորված, անհատական-խմբային

դ) ըստ կատարման տեղի՝ դասարանային, լաբորատոր, տնային:

Մեծապես կարևորելով թարգմանության դերը օտար լեզվի ուսուցանման գործընթացում՝ սույն հոդվածում քննության է առնվել լեզվի դասավանդման բազմաթիվ մեթոդներից մեկը, որի հիմքում ընկած է թարգմանությունը: Խոսքը «քերականություն-թարգմանություն» մեթոդի մասին է: Այն նոր չէ և տարիներ շարունակ կիրառվել է դասական լեզուների՝ լատիներենի և հունարենի դասավանդման ժամանակ: Այդ իսկ պատճառով ստացել է նաև «դասական մեթոդ» անվանումը: 20-րդ դարի սկզբում այս մեթոդի օգնությամբ ուսանողները սովորել են կարդալ և հասկանալ օտար լեզվով գրված գրական ստեղծագործություններ: Քերականություն-թարգմանություն մեթոդի կողմնակիցները ենթադրում էին, որ օտար լեզվի քերականությունն ուսումնասիրելով՝ հնարավոր է ավելի ամրապնդել գիտելիքները մայրենի լեզվի քերականության վերաբերյալ, որն էլ իր հերթին կհղկի մայրենի լեզվով նրանց թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը:

Քերականություն-թարգմանություն մեթոդը ենթադրում է մտավոր գործողությունների համակարգ, որն ուղղված է լեզվի գրեթե բոլոր ասպեկտների ուսումնասիրությանը:

Այժմ փորձենք քայլ առ քայլ նկարագրել անգլերեն լեզվի մի դասապրոցես, որի ընթացքում դասախոսն առաջնորդվում է հենց այս մեթոդով:

1. Ուսանողները կարդում են անգլերեն գրական որևէ ստեղծագործությունից մի հատված, օրինակ՝ Մարկ Թվեյնի "Life On The Mississippi"-ից "The Boy's Ambition": Դասախոսն այս ընթացքում ուշադրությունը կենտրոնացնում է հնչյունաբանության վրա՝ ուղղելով ուսանողների սխալները, անհրաժեշտության դեպքում կանգ առնելով դժվար արտասանություն ունեցող բառերի վրա:

2. Յուրաքանչյուր ուսանող փորձում է իր կարդացած հատվածը թարգմանել հայերեն:

3. Այնուհետև դասախոսը հարցնում է՝ արդյոք ամեն ինչ հասկանալի է: Հարցերի առկայության դեպքում նա պատասխանում է դրանց հենց մայրենի լեզվով:

4. Ապա ուսանողներին հանձնարարվում է գրավոր պատասխանել տեքստի վերջում զետեղված հարցերին: Ի դեպ հարցերը տրված են անգլերեն լեզվով, պատասխանները ևս ակնկալվում են անգլերենով:

5. Երբ հանձնարարությունն ավարտված է, դասախոսն ստուգում է յուրաքանչյուրի աշխատանքը, ուղղում նրանց սխալները՝ մեկ առ մեկ մեկնաբանելով դրանք:

6. Դասի մնացած ժամանակահատվածը հատկացվում է քերականությանը և ուսանողների բառապաշարի հարստացմանը: Ուստի նրանք տեքստում եղած անծանոթ բառերը թարգմանում են հայերեն, ապա դրանցից յուրաքանչյուրով կազմում նախադասություններ:

7. Դասախոսի հաջորդ գործողությունն ուղղված է դասավանդվող լեզվի քերականությանը: Հետևաբար նա սկսում է բացատրել տվյալ դասի համար նախատեսված քերականական նյութը, օրինակ՝ ուղիղ խնդրի գործածությունը հարադիր բայերի հետ:

8. Քերականական նյութի մեկնությունից հետո ուսանողներին տրվում է գործնական աշխատանք, որի պահանջն է՝ ելնելով համապատասխան կանոնից՝ որոշել ուղիղ խնդրի տեղը տրված հարադիր բայերից յուրաքանչյուրի հետ գործածելիս:

9. Այնուհետև ուսանողները սովորում են տվյալ թեմայի շուրջ առանձնացված ակտիվ բառապաշարը, ապա փորձում են վերհիշել և ամրապնդել անցած քերականական կանոնները, որից հետո նրանք համծնարարվում է սովորել մի խումբ անկանոն բայերի ներկայի, անցյալի և անցյալ վաղակատարի բայածները:

10. Ուսանողների ստեղծագործական ունակությունները զարգացնելու և ամբողջ նյութը ամրապնդելու նպատակով թեմայի ամփոփմանը նվիրված դասին նրանք տվյալ թեմայով գրում են շարադրություն:

Այս ամենից բացի ուսանողները պարբերաբար կատարում են փոքրիկ թարգմանություններ անգլերենից հայերեն և հակառակը: Թարգմանությունները կատարվում են և՛ գրավոր, և՛ բանավոր:

Արդյունավետ է նաև ժամանակ առ ժամանակ թելադրություն-թարգմանություն վարժության կիրառումը: Այն լսողությամբ օտար խոսքի գրավոր թարգմանությունն է մայրենի լեզվի: Թարգմանության տեքստը ընտրվում է ուսանողների գիտելիքները և ունակությունները հաշվի առնելով: Թելադրություն-թարգմանությունը օգնում է գերծ մնալ բառացի թարգմանությունից՝ միաժամանակ մարգելով ուսանողի ուղեղը և հիշողությունը:

Օտար լեզվի դասավանդման զանազան մեթոդների շուրջ գոյություն ունեն բազմաթիվ իրարամերձ կարծիքներ: Յուրաքանչյուր ոք ճիշտ է համարում այն մեթոդը, որով առաջնորդվում է: Սակայն պետք է ընդունել, որ լեզուն քարացած չէ, և դրա զարգացման հետ հին մեթոդները փոփոխվում են: Ուստի չպետք է կառչել հին մեթոդներից, այլ կարելի դրանք հարստացնել նոր տարրերով, որոնք դասը ավելի մատչելի, հետաքրքիր և գունեղ կդարձնեն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Diane Larsen-Freeman – “Techniques And Principles In Language Teaching”, Oxford University Press, 1986

2. Миньяр-Белоручев Р. К. - “Последовательный Перевод”, Москва, 1969

3. Գաբրիելյան Ս. և ուրիշներ – “Թարգմանաբանության քրեստոմատիա” Ուս. ձեռնարկ- Երևան, «Սահակ Պարթև», 2002

4. Աստվածատյան Ս. Գ. - “Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա”, Երեվան, «Լույս», 1985